ցնում են երիտասարդութեան բարի կողմերը և մղում են նորանց առաքինութեան, հայրենասիրութեան հերոսական ճանապարհի վերա և որ ամենից վսեմն է, կան այնպիսի տիկիններ և օրիորդներ, որոնցից հայրենասիրութիւն է բուրում. նրանց մարմին և արիւն է դարձած ազգի բարձրութեան միտքը:

Իմ ակնարկած տիկինների և օրիորդների իդէալը: Եղիշէի նկարագրած «Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք» կամ պարոն Բաֆֆիի ստեղծած «Դաւիթ բէկի» Սիւրին է:

Արդարև Երևանը պարտաւոր էր ունենալ յիշեալ բարեմասնութեանց կատարելատիպը. նա մայրաքաղաք է մի նահանգի և կեդրոն 200 հազարից աւելի հայ ազգաբնակութեան: Տարակոյս չը կայ, որ այդքան հոգիների պատասխանատուութիւնը, որոնք բարոյական մնունդ են խնդրում, պահանջվում է նորանից: Մի շատ իրաւացի պահանջ, որին պատասխանում են չարիքներով և վատ օրինակներով: Ուրեմն ինչ կարելի է գտնել այն շրջապատումը, որի կեդրոնում կեանք, կրակ չը կայ: Այդպիսի շրջապատում բարոյական քայքայումի արտաւիրքից զատ ոչ այլ ինչ չէ կարելի գտնել: Նորա մի կողմում մարդիկ կան, որ մարմին են կողոպտում, միւս կողմինները մարմինն էլ, հոգին էլ միասին են կողոպտում:

Մեր այս անհեթեթ պակասութեան վերայ խո-